

Եվրասիա միջազգային համալսարանի  
աշխարհագրական գիտությունների ֆակուլտետի ղեկավար

Ս. Օհանյան

09 օգոստոսի 2022թ.



**ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔԸ**

**Լևոն Սուրենի Հարությունյանի՝**

**«Իրավունքի ձևերի (աղբյուրների) համակարգը. Հայաստանի**

**Հանրապետությունում (տեսական-իրավական վերլուծություն) ատենախոսության**

**վերաբերյալ» վերտառությամբ**

**իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման**

**(ԺԲ.00.01) ատենախոսության վերաբերյալ**

Վերլուծելով Լևոն Սուրենի Հարությունյանի ներկայացրած ատենախոսությունը և սեղմագիրը՝ «ԵՎՐԱՍԻԱ» միջազգային համալսարանը անհրաժեշտ է համարում ներկայացնել հետևյալ մեկնաբանությունները.


1. Իրավունքի աղբյուրների թեմային մեծ ուշադրություն է դարձվել ինչպես ներպետական, այնպես էլ արտասահմանյան գիտության մեջ: Բազմաթիվ ուսումնասիրություններ նվիրված են ինչպես ընդհանուր տեսական հարցերին (դասակարգում, իրավաբանական ուժ, պատմական զարգացում եւ այլն), այնպես էլ տարբեր իրավական համակարգերում իրավունքի առանձին աղբյուրների բնույթի եւ գործունեության հետ կապված ավելի նեղ հարցերին:
2. Միեւնույն ժամանակ, իրավական հարաբերությունների դիսամիզմը, իրավունքի նոր աղբյուրների ի հայտ գալը եւ արդեն ավանդական դարձած աղբյուրների փոխակերպումն արդիական են դարձնում ատենախոսի կողմից ընտրված թեման: Հարցերը, որոնք կապված են այն վերազգային ակտերի բնույթի և իրավունքի աղբյուրների համակարգում տեղի հետ, որոնք ի հայտ են գալիս իրավական ինտեգրացիոն գործընթացների արդյունքում (Հայաստանի Հանրապետության դեպքում Եվրասիական տնտեսական միության գործունեության արդյունքում), իրավական մոտարկման գործընթացները եւ Հայաստանի իրավական համակարգի վրա Եվրոպական իրավունքի աղբյուրների ազդեցությունը (ներառյալ ոչ միայն ԵՄ-ի՝ իրավական իրականացման ենթակա դիրեկտիվները եւ կանոնակարգումները, այլեւ ԵՄ-Հայաստան համաձայնագրի հիման վրա ստեղծված մարմինների ակտերը, ինչպես նաեւ ԵՄ օրենսդրության մեկնաբանման հետ կապված վեճերի դեպքում ԵՄ-ի արդարադատության դատարանին դիմելու արդյունքում ընդունված ակտերը, որոնք ենթակա են կատարման Հայաստանում), «փափուկ» իրավունքի աղբյուրների դերը (միջազգային կազմակերպությունների ինստիտուտների

ակտեր, փորձագիտական մարմինների խորհրդատվական կարծիքներ, մասնավորապես՝ Վենետիկի հանձնաժողովի՝ ժողովրդավարություն իրավունքի միջոցով) ազգային իրավական համակարգի ձեւավորման գործընթացում, իրավունքի աղբյուրի հասկացության փոխակերպումն իրավական ընկալման նոր մոտեցումների ի հայտ գալու համատեքստում, Վերազգային կորպորացիաների և կորպորատիվ նորմերի դերը (օրինակ՝ SWIFT-ը բանկային ոլորտում, ինտերնետային կարգավորման ոլորտում գործող նորմերը), իրավական (ոչ դատական) պրակտիկայի՝ որպես իրավունքի աղբյուրի դերը. այս ամենն ընդամենը մի քանիսն են այն արդի թեմաների, որոնք պահանջում են խորքային ուսումնասիրություն եւ տեսական իմաստավորում:

3. Ցավոք, այս խնդիրներից եւ ոչ մեկը չի հիշատակվում ատենախոսության մեջ եւ չի գտնվում ատենաոսի ուշադրության կենտրոնում: Հեղինակը կենտրոնանում է այն հարցերի վրա, որոնք արդեն դարձել են դասական, եւ չի առաջարկում դրանց լուծման զգալիորեն նոր տեսական մոտեցում: Սա ուղղակիորեն ազդում է աշխատանքի արդիականության եւ նորույթի վրա: Պաշտպանության ներկայացվող թեզերի մեծ մասը դոգմատիկ պոզիտիվիզմի հայտնի պոստուլատներն են. ավելին, որոշ դրույթներ վերարտադրում են Հայաստանի Սահմանադրության դրույթները, որոնք դժվար թե ատենաոսի կողմից պաշտպանության կարիք ունեն:


Ատենախոսությունը վերլուծելու գործընթացում բացահայտված խնդիրների մեծ մասը, ցավոք, համակարգային բնույթ ունեն եւ բնորոշ են հայրենական իրավաբանական գիտությունների համար:

4. «Ավանդաբար» դիսերտացիայի թեման ձեւակերպվում է չափազանց լայն եւ չի պարունակում հետազոտվող խնդրի հստակ նշում: Բացի այդ, հետազոտական հիպոթեզը եւ հետազոտության հիմնական հարցը նույնպես ձեւակերպված չեն: Վերջինս աշխատանքը դարձնում է նկարագրական եւ, փաստացի, հիմնված է դոկտրինալ, հիմնականում ռուսական, աղբյուրների կոմպիլյացիայի վրա: Արտասահմանյան գրականությունը պատշաճ մակարդակով չի ընդգրկվել ուսումնասիրության մեջ (բացառությամբ ֆրանսիական եւ ամերիկյան իրավական ուսմունքի մի քանի հիշատակումների): Շատ դոկտրինալ աղբյուրներ հնացած են:
5. Հեղինակը հստակ չի սահմանում, թե իրավունքի էության որ տեսության վրա է հիմնված իր հետազոտությունը, իրավաընկալման որ տեսակն է ձեւավորում իր հետազոտական աշխարհայացքը եւ կանխորոշում հիմնական հետազոտական միտումները: Հաշվի առնելով աշխատության մեջ շարադրվածը՝ կարելի է եզրակացնել, որ աշխատանքը գրված է հետսովետական դոգմատիկ պոզիտիվիզմի համատեքստում: Միեւնույն ժամանակ, օգտագործված գրականության հիման վրա հեղինակը փորձ է անում դիմել այլընտրանքային մոտեցումների (մասնավորապես՝ բնական իրավունքի տեսությանը եւ սոցիոլոգիական տեսությունների՝ պետության եւ այլ դերակատարների իրավունքի ձեւավորման գործում ունեցած դերի համատեքստում): Սակայն ուսումնասիրության մեկ տեսական եւ փիլիսոփայական հիմքի բացակայությունը նման փորձերը դարձնում է անհետեւողական եւ անբավարար չափով հիմնավորված:
6. Ատենախոսության մեջ բացակայում է հետազոտության մեթոդաբանական հիմքի նկարագրությունը: Ատենախոսը ներկայացնում է գիտական ճանաչողության մեթոդների



ստանդարտ ցուցակ (և ոչ թե հետազոտական մեթոդների)՝ առանց մանրամասնորեն ներկայացնելու, թե ինչպես են այդ մեթոդները կիրառվում աշխատանքում: Բացի այդ, հեղինակը հայտարարում է համեմատական մեթոդի կիրառման մասին: Իրականում, համեմատական-իրավական վերլուծություն պատշաճ մակարդակով չի իրականացվում ո՛չ մի կրո, ո՛չ էլ մակրո մակարդակներում: Աշխատանքում միայն առանձին հղումներ կան արտասահմանյան պետությունների նորմատիվ ակտերին՝ առանց պատշաճ վերլուծության: Օգտագործվող դոկտրինալ աղբյուրները հիմնականում ըստ էության հնացած են, հաշվի չեն առնում ժամանակակից իրավական գործընթացների հետ կապված էական փոփոխությունները (օր.՝ տարածաշրջանային ինտեգրացիա եւ այլն):

7. Հետազոտության էմպիրիկ հիմքը շատ թույլ է: Կարծում ենք, որ աշխատանքն էականորեն կշահեր ազգային օրենսդրության, դատական պրակտիկայի, ընթացիկ բարեփոխումների իրականացման նկատմամբ մշտադիտարկում իրականացնող փաստաթղթերի և օրինաստեղծ գործունեության ընթացքում պատրաստվող փաստաթղթերի մանրամասն վերլուծություն իրականացնելու դեպքում: Այո, հետազոտության վերնագրում հեղինակը նշում է, որ դա տեսական-իրավական վերլուծություն է: Բայց դա չի արդարացնում հետազոտության էմպիրիկ հիմքի բացակայությունը:
8. Ատենախոսության տերմինաբանությունը նույնպես հարցեր է առաջացնում: Ինչպես հետազոտության վերնագրում, այնպես էլ հիմնական տեքստում հեղինակը կիրառում է իրավունքի աղբյուրները եւ ձեւերը որպես հոմանիշներ: «Իրավունքի ձեւեր (աղբյուրներ)» լեզվաոճական կառուցակարգի կիրառումն ավանդական է ուսական իրավական դոկտրինում, որին հեղինակն իրավունքի ֆորմալ աղբյուրների համատեքստում բազմիցս անդրադառնում է: Հեղինակը, սակայն, փորձում է դիմել իրավունքի աղբյուրի ավելի լայն հասկացությանը՝ շոշափելով իրավունքի զարգացման քաղաքական, պատմական, սոցիալական, մշակութային նախադրյալները, սակայն օգտագործում է նույն ձեւական-իրավական տերմինաբանական կառուցակարգը:
9. Աշխատության մեջ բավարար ուշադրություն չի դարձվում Հայաստանում դատական նախադեպի խնդիրներին եւ դրա տեղին իրավունքի աղբյուրների համակարգում, թեեւ հեղինակը հետազոտության արդիականությունը հիմնավորելիս մատնանշում է նման խնդիրների առկայությունը: Հեղինակը լայնորեն մեջբերում է ուս հեղինակներին, որոնց մոտեցումները թե՛ դատական նախադեպի, թե՛ ազգային դատական պրակտիկայի եւ թե՛ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկայի վերաբերյալ էականորեն տարբերվում են Հայաստանի պրակտիկայից: Հեղինակը պատշաճ ուշադրություն չի դարձնում Դատական օրենսգրքի դրույթներին, Վճռաբեկ դատարանի որոշումների կարգավիճակին (օրինակ, տեղին կլիներ վերլուծել Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումները, դրանց կառուցվածքը եւ դատական փաստարկումը եւ համեմատել դասական նախադեպի հետ), չի վերլուծում ՄԻԵԴ որոշումների կիրառումը որպես իրավունքի աղբյուր ազգային դատարանների կողմից (տեղին կլիներ ուսումնասիրել, թե ինչպես են ՄԻԵԿ-ը եւ ՄԻԵԴի պրակտիկան կիրառվում դատական փաստարկման մեջ. անհրաժեշտ էմպիրիկ նյութը հնարավոր է գտնել DataLex-ում): Աշխատանքը ավելի հաջող կլիներ, եթե հեղինակը փորձեր պարզել, թե ինչ գործոններ են ազդում դատարանի որոշումներում այդ աղբյուրներին հղումների թվի աճի վրա: Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումների առնչությամբ նպատակահարմար կլիներ անդրադառնալ ՍԴՈ-1359 որոշմանը, որը պարունակում է



դիրքորոշում սահմանադրական դատարանի որոշման պատճառաբանական մասում սահմանադրական նորմերի վերաբերյալ տրված մեկնաբանությունների նշանակության վերաբերյալ:

10. Իրավունքի աղբյուրների ամբողջ համակարգը ներառելն աշխատանքը դարձնում է մակերեսային եւ նկարագրական, ավելի շատ նման է ուսումնական դասագրքի, քան գիտական հետազոտության: Որոշ հարցեր (օրինակ, սահմանադրական ինքնություն, որը հիշատակվում է բազմաթիվ դոկտրինալ աղբյուրների վրա հղում կատարելով՝ առանց Հայաստանի սահմանադրական ինքնության էության եւ բովանդակության եւ այս հասկացության գործնական նշանակության պատշաճ վերլուծության): Սակայն, չնայած հետազոտությունը համապարփակ և համակարգային լինելը հոչակելուն, ժամանակակից կարելուր տեսական եւ գործնական հիմնախնդիրներ մնացել են հեղինակի տեսադաշտից դուրս: Աշխատանքն էականորեն կշահեր, եթե հեղինակը չկենտրոնանար ընդհանուր առմամբ և ամբողջությամբ իրավունքի աղբյուրների թեմայի վրա, այլ ուշադրություն դարձներ Հայաստանում այդ աղբյուրների համակարգին (ինչպես հայտարարվել էր վերնագրում), դրանց հարաբերակցության եւ աստիճանակարգության, ավանդական եւ նոր աղբյուրների վերափոխման ու եւ իրավակիրառման մեթոդաբանական խնդիրների վրա: Իրոք, հետազոտության մի հատվածը (գլուխ 2) նվիրված է իրավունքի աղբյուրների հիերարխիկ կազմակերպման թեմային: Սակայն հեղինակը կենտրոնանում է հիերարխիայի գաղափարի եւ էության վրա՝ որպես ընդհանուր տեսական կատեգորիա եւ բավարար ուշադրություն չի դարձնում իրավունքի աղբյուրների հիերարխիային որպես այդպիսին: Այս մասում ներկայացված եզրակացությունները մակերեսային են եւ չեն լուծում առկա իրավակիրառ խնդիրները:

11. Ուշագրավ է հեղինակի առաջարկությունը Հայաստանում իրավունքի աղբյուրների հիերարխիկ համակարգը նորմատիվ կարգավորում տալու մասին (ցավոք, շարադրված լինելով մի քանի պարբերություններում, այս գաղափարը կորել էր ընդհանուր տեքստում եւ պատշաճ զարգացում չի ստացել): Կոչված լինելով ապահովելու իրավական որոշակիություն՝ նման կարգավորումը, սակայն, կարող է բացասաբար ազդել իրավունքի «ճկունության» վրա: Ընդհանուր առմամբ, դրական գնահատելով այս առաջարկը, կարծում ենք, որ հեղինակին անհրաժեշտ է ավելի մեծ ուշադրություն դարձնել առաջարկվող կարգավորման հիմնավորմանը եւ բովանդակությանը: Այս դեպքում հետազոտության արդյունքը կարող էր լինել առաջարկվող օրենքի(ների) հայեցակարգը, իսկ հետազոտությունն ինքնին՝ դրա տեսական հիմնավորումը: Աշխատելով հայեցակարգի վրա՝ հեղինակը ստիպված կլիներ ավելի խորն ուսումնասիրել առկա գործնական եւ տեսական խնդիրները, քննադատորեն գնահատել, թե որ գործընթացները պետք է եւ կարող են կարգավորվել օրենսդրական մակարդակում, եւ որոնք՝ մեթոդաբանական հանձնարարականների միջոցով: Ատենախոսն ուշադրություն կդարձներ նաև արդարադատության նախարարության կողմից պլանավորվող օրենսդրական փոփոխություններին՝ կապված իրավական մոտարկման գործընթացի շրջանակներում օրինաստեղծ գործունեության հետ (տես՝ E-draft):

12. Աշխատանքում առկա են նաեւ տեխնիկական թերություններ (հնացած տեղեկատվության եւ օրենսդրության ու բարեփոխումների գործընթացներին, մասնավորապես՝ սահմանադրական բարեփոխումներին վերաբերող հնացած տեղեկատվության օգտագործում):

Քննարկման արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ հետազոտության գիտական արժեքն աննշան է: Չնայած հետազոտության մեջ հակառակ պնդմանը՝ ստացված արդյունքների գործնական կիրառությունը կասկածելի է: Հեղինակի գործնական առաջարկությունները պահանջում են հետագա կատարելագործում եւ հիմնավորում: Իրավունքի աղբյուրների հետ կապված ժամանակակից կարելու հիմնանդիրների անտեսումը, ուսումնասիրության ցածր որակը եւ դրա կոմպիլյացիոն բնույթը՝ հիմնված առավելապես ռուսական դոկտրինի վրա, թույլ չեն տալիս պնդել, որ աշխատանքը ունի հայրենական իրավագիտության զարգացման համար զգալի ներուժ:

Մենք ատենախոսին մաղթում ենք հաջողություններ իր հետագա գիտական գործունեության մեջ և բաց ենք գիտական քննարկումների համար:

Առաջատար կազմակերպության կարծիքը ներկայացվել է Եվրասիա միջազգային համալսարանի իրավագիտության ամբիոնի վարիչ, ի.գ.թ. Աննա Խվորոստյանկինայի կողմից:


ԵՄՀ իրավագիտության  
ամբիոնի վարիչ, ի. գ.թ.



Ա. Խվորոստյանկինա

Ա. Խվորոստյանկինայի ստորագրությունը հաստատում է:

ԵՄՀ ՄՌԿ բաժնի ղեկավար



Ք. Միմոնյան

